

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ԹԵՈՂՈՍԻՈՅ ԴԵՊ Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻՍՆ

28 Ապրիլ — 26 Մայիս 1884.

« Բայեթամ (թի դարուն) զօրացաց մեք (Հայքս) և քաղաքաց, և շինեցուց
դ զգիւղս և զգաւառս, իշխանք և աղնուականք, 'ի Ղարապաղտէն¹ սկսեալ
դ մինչև 'ի Սուրխաթ և 'ի Ֆեօղօսիա, 'ի լեւին և 'ի դաշտս լի տարին վանօ-
դ բէրէք և եկեղեցեաք... շինեցուց ասեց² Նորիւր հազար և զեկեղեցիս հազար-
դ և 'ի ակէ հոնականաց պարսպեցին 'ի քաղաքն Ֆեօղօսիա »³

Հին ՂԻՄԵՅԻ ԲԱՄԱՍՏԱՌԻՐՔ

Ա

Ի ԲՐԵՒ ԹԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ



ազմաթիւ ազդային գրաւոր
յիշատակարաններէ և վա-
ւերական քարուկիր և ա-
ղիւսակերտ շէնքերէ, որոց
ոմանք դեռ ևս կանգունք՝
այլք կիսակործան, գիտեմք
որ թի դարուն, նոյն և
'ի մօտաւոր անցելում՝ Հայոց մի մեծ
դաղթականութիւն բնակած է Տաւրիոյ
թերակղզւոյն մէջ, եթէ ճանապար-
հորդ մի՝ վերը յիշած յիշատակարա-
նին ցուցած ճամբովը՝ այժմեան Թէո-
դոսիոյ արևելեան ծայրէն (արգելանո-
ցին կողմէն) սկսելով սարերուն վը-
րայէն անցնի երթայ 'ի Սուրխաթ (Հին-
Ղրիմ), և անտի անտառաց միջէն և
սարերուն վրայէն դէպ 'ի Ղարապա-
ղար (Խարասու), անձամբ կարող է
ստուգել յիշատակարանիս վաւերական
նութիւնը: Վասն զի այդ ճամբուն վը-
րայ զբեւթէ յամենայն քայլափոխի
կը գտնայ հին հայրենի յիշատակաց
ցանկալի՝ մանաւանդ և ցաւելի՝ մնա-
ցորդքը. անտառաց մէջ, սարերու ծայր

ամրակուռ եկեղեցիք, անապատացեալ
վանքեր, տխրատեսիլ գերեզմանոցք՝
սեպեցեալ և մամուսպատ քարերով,
'ի միջի որոց մեծ խնամքով փորուած
և քանդակուած խաչքարիք մնարո-
պեան տառերով:

Տեղ տեղ մեր նախնեաց տանուէր
իշխանաց և բարեպաշտ տիկնանց և օ-
րիորդաց Նուր-Մեհէթնեուր և Կուսի-
կեանց շինել տուած ավանակիս աղ-
բերք՝ կ'անցնեն ճանապարհորդին ծա-
րաւը, և այլ ուրեք մեր պապերուն խը-
նամով տնկուած և մշակուած պարտէզ-
ներն՝ դեռ ևս կ'ընծայեն առատապէս
քաղցրահամ պտուղներ:

Ի մօտաւոր անցելում՝ Տաւրիոյ հա-
յաբնակ և հայախօս քաղաքներն և ա-
ւաններ, այժմ այլալեզու ժողովուրդք
կը բնակին: Կէօք-Թէփէ, Նախիւռան
(այժմ՝ Գուրիքս), Սուլթան-Սալա,
Թօփուր, Օրդալան, Խալա, Սօփուր-
Սու, Երբեմն մեծամեծ հայաբնակ ա-
ւաններուն մէջ, այժմ բնաւ հայ չկայ:
Մոզկան² և Քեմճակ (Գամճակ) վան-

1 Յիշատակարանի մէջ յիշուած անունները
այժմ, ոմանք սակաւ մի այլայլած, ոմանք բոլո-
րովն տարբեր կը հնչեն. Ղարապաղարն՝ այժ-
մեան Խարասու է, Սուրխաթն՝ Էսկի-Ղրիմ:

Ֆեօղօսիայն՝ Թէոդոսիա կամ Քեֆէ քաղաքն:
2 Մոզկան՝ Խալա գիւղին մէջ վանք էր Հայոց:
Քեմճակ, Հին-Ղրիմու անտառին մէջ, եկեղե-
ցին՝ Ս. Աստուածածին:

քերն՝ այժմ բոլորովին անապատացել են. կապարաթ մեծ գիւղը, որ երբեմն ծուխ էր Ս. Նշան վանքին Սուրխաթու և բնակարան հայկազն իշխանին Մուղալննց, որ ըստ ձեռանէ Գննուացւոց՝ իւր զօրքերով կը պահպանէր գաւանը և զՍուրխաթ իւր վանքերով ընդդէմ՝ այլազգեսաց յարձակմանց, այժմ գերբկացի կոյտ մի մեր առջև կը ներկայացընէ :

Այժմ թերակղզւոյս մէջ 5000էն աւելի չեն հայկազունք, որք մեծաւ մասամբ քաղաքաց մէջ կը բնակին և առեւտրով կը պարապին. շատ թաթարաբնակ, ռուսաբնակ և գերմանացի գեղերու մէջ ևս խանութպանք՝ մեր ազգայինք են. համեմատութեամբ բազմաթիւ են Սիմֆերոպոլի, Խարասուի և Օր-Քաղարի հայկազունք, Գիւղատէր և այգէտէր հայեր ևս կան, այլ մշակ կամ գիւղացի ազգայինք բոլորն ևս դաղթած են յեկատերինեսլաւ գաւառ 1778ին¹, ուր շինած են նոր Նախիվան քաղաքը, չորս կողմը հինգ մեծամեծ հայաբնակ գիւղերով. ահա ՚ի տես այդ երբեմն Տաւրիացի հայկազանց՝ ելայ ՚ի ճանապարհ այս տարի (1884) :

Եթէ այս մեծ գաղթականութիւնը եղած չլիներ ասկէ 114 տարի առաջ ՚ի Ղրիմէ, այժմ հին յիստականաբանիս գրութեան համեմատ բիւրաւոր հայախօս ժողովուրդ մի, հազարաւոր եկեղեցեք պիտի չէնցընէր զժողովապատն Տաւրիմ . . . :

Բ

Ի ԿԵՐՋԻ ՄԻՆՁԵՒ ՅԹԱՅՂԱՆ

Ռուսաց մեծ փռչքին կոչուած շոգենաւով մեկնեցանք ՚ի Թեոդոսիոյ, մի քանի Նախիվանցի երիտասարդ բարեկամաց հետ ՚ի 28 ապրիլի, գիշերուան ժամը տասին. միւս օր առաւօ-

տուն արեւածագին հասանք ՚ի Կերջ, Ռրովհետեւ մեծ նաւ է փուչքին՝ նաւապետն զգուշացաւ նեղուցէն ներս մտնել, այլ կանգ առաւ բաց ծովուն վրայ, առաջին կարգի մեծ բերդերուն դիմաց, որք կը պաշտպանեն զնեղուցը։ Արդէն ինձ ՚ի վաղուց ծանօթ էր տեղին, և չկար ինչ անսովոր կամ հետաքրքրութեան արժանի. այն պատճառաւ՝ նաւին խորը, առաւօտեան քաղցր քունը կը քաշէի. սակայն երբ մեծ շառաւմամբ խարիսխ ձգեց նաւն, և կը սպասէր որ փոքր շոգենաւ մի գայ Կերջի ճանապարհորդները կրելու համար, հարկ եղաւ ինձ անուշիկ քունս ընդմիջելով՝ փութալ ՚ի վեր՝ նաւուն տախտակաւմածին վրայ :

Ի ծովէ չուեի Կերջ այն ականապարար և հաճոյական երեւոյթը, ինչ որ կ'ընծայեն Եալթա և այլ գիւղորէք հարաւային ափանց Ղրիմու. սակայն հանդարտ կապուտակ ծովը, մեղմիկ և ջերին՝ ծովային գոլորշեք տամուկ օդըն, մայիսի առաւօտն, նոյն և դիմաքըս բարձրացած Միհրդատ կոչուած բլուրն, ստորափ մանեկաձև ձգուած տներով, թօքի և աչաց ոչ անհաճոյ ազդեցութիւն կ'առնէին, Հարկ եղաւ սպասել զմեզ կրելի նաւուն՝ փուչքինի վրայ։ Անախորժ վիճակ է մարդուս համար՝ աչքը մի կողմ յառած սպասելը, յակամայ կամս մեք այդ վիճակին մէջ կը գտնուէինք. սակայն մարդուս դիրքը, թէպէտս ժամանակ կապուած և անաղատ ևս լինի, այլ միտքն միշտ ազատ է. եթէ այն միջոցին մարմնով Ենիգալէի նեղուցին դիմաց անգործ սպասելու գատապարտուած էի, այլ մտացս համար չկար արդելք Նախիվան երթալ գալ, նոյն մինչև ցհեռաւորն Անի։ Այլ հանգամանք պարագայից շատ չհեռացուցին միաբնայնք ափուհներն՝ ևր ներեն ինձ անշուշտ արգոյ ընթերցողք, եթէ ես աստ մտացածին ցնորիւք հայ ճանապարհորդի՝ սակաւ մի

¹ Ոմանք 1776ին, այլ մի տարի վերջը կը դընեն դաղթականութեան սկիզբն. այլ մեզ վերջ

յիշուած Թուականն ստոյգ կ'երևի և համաձայն ընդ պատմութեան :

դրադեցընեմ գիրենք, մինչև որ զմեզ կրելի նաւն գայ:

Անձին փորձով անշուշտ ամէն ոք գիտէ, թէ շատ անգամ մի վանկ, մի բառ, մի անուն՝ մարդու միտքը մեր տեղուանք կը տանի. իմ գիմայս մի պատմական մեծ անուն, լերին յատկացեալ, կանգնած կեցած էր, Միհրըդատայ եւպատորի փեսայի կամ քեռան՝ մերս քայլին Տիգրանայ Արշակունց: Ի պատմութենէ գիտեմք՝ որ Միհրդատ եւպատոր տիրած է թիւրքա-կղզւոյս, փրկչին թուականէն 80 տարի առաջ, Քերսոսիսեան հզօր հասարակապետութիւնը, Վոսփորեան թագաւորութեան հետ 'ի միասին, որոյ մայրաքաղաքը դիմացո կեցած էր, մարդ կացուցանելով իւր աշխարհին կամ թագաւորութեան Պանտոսի:

Կերջի հին անունն Պանտիկապէոն է, քաղաք-հինգ-բազնաց. երբ կամ յորոց կրած է այդ անուանափոխութիւնը, յայդմիկ զանազանին կարծիք գիտնոց, Այլ եւ Տիգրանայ փեսին վրայ կը սքանչանայի մտքը, որ 2000 տարի անցնելէն վերջ անգամ, կը տիրէր երկուց ծովուց Սեին և Ազախու, լեռնահանգէտ անուամբն: Արդեօք, կ'որոճայի մտքը թուրքաց Կէլ (անցք) բառն է: որ այս քաղաքս կը կրէ իւր վրայ, իբրեւ յատուկ անուն. այլ երեւակայութիւնս զիս այնպէս կ'ուզէր համոզել որ հայերէն կիրձ բառը լինի, իբրեւ նեղուց գործածուած. վաշ ցնորից երեւակայութեան... այնպէս ինձ կ'երևար՝ որ Միհրդատ ստմիկյապէս թերակղզւոյս տիրելէն վերջ 'ի ձեռն Գետ. փանդոսի զօրավարին, եկած է հոս 'ի Սինոպայ, կողակցին հայկազն բամբչին հետ 'ի միասին, և երբ պերճանօք կը յայտնէ իւր կամքը ընկերոջը՝ թէ կ'ուզէ՞ այդ երկուց ծովուց միջավայրքն հաստատել իւր գահը, փոխելով 'ի Սինոպայ, խոհական բամբիշն մեղմել ուղելով քաջին յոխորտ բարբը, կը յայտնէ՝ թէ « Ինքն այն տեղ նեղուց կամ կիրճ մի կը տեսնէ »: Քաջն Միհրդատ հասկընալով թագուհւոյն միտքը կիրձ

կամ կերջ կը կոչէ տեղին, և լերին իւր անունը կը սեփականէ, և շուտով թագաւորանիստ քաղաք կը լինի Կերջ:

Շատ անգամ երեւակայութեան գրծած պատկերը քան զքնականը կը գերազանցէ, զի երեւակայութիւնն գունոց և ներկերու խնայութիւն անեղ չախորժիր. անհրաժեշտ է որ Միհրդատ այդ բլուրին վրայ շատ անգամ ելած է թագուհւոյն հետ 'ի միասին. զի զօրսանաց մի միայն յարմարաւոր դիրքն է Կերջի. այլ ինձ 'ի ծովէ այնպէս կ'երեւէր, որ բլրիս բարձրագոյն կէտին վրայ կանգնած է տիտանայինն Միհրդատ, Պոնտիոսի իշխեցող, Հռովմայ արժանաւոր ակոյեան, Տիգրանայ համապատշաճ փեսայ, զլուխը փետրաղարդ սաղաւարտ, զրահուորեալ հսկալիտակ մարմնով, ալ ոտքը ամուր կոխած նոր տիրած հողին վրայ և բազուկը դէպ 'ի ծով պարզած. իբրեւ թէ զրուցէր 'ի ձախմէ կանգնած թագուհւոյն, « Տես որպիսի քաջի ունիս բազդ հարուն և թագակից լինելու »: Իսկ թագուհին համապատշաճ քաջի առնն, նոյնպէս բարձրագիտակ, այլ կանացի և վայելչական գեղով, ծիրանեաց և շղարշեւրու մէջ, իբրեւ յաւերժ հարսնուհի, քմծիծաղով հաճիլ կը ձևացընէ. այլ 'ի սրտէ անշուշտ կը զրուցէ՝ թէ « Այդ « փառք » նոր չեն ինձ համար. զի քոյր « եմ մեծին և քայլին 'ի թագաւորս » « Տիգրանայ Արշակունց »: — Մինչդեռ այս կարճ միջոցին, որ հազիւ քառօր մի ժամու տեւեց, Միհրդատ առնուէր իբրեւ ելեքարանկան կայծ մի կը մղէր իւր տանէր միտքս՝ հնադարեան պատմութեանց մէջ, փոքրիկ շողոմաւոր մեծին մերձենալով, որոյ հազիւ կայմը կ'երևնար, վարէն 'ի վեր կը սուլէր 'ի կերջ նաւորդաց՝ թէ ժամանակ է մեկնելու. հապճեպով պարկիկս առած՝ իշայ փոքր նաւուն վրայ, որ շուտով հասուց զմեզ 'ի Կերջ:

Սա երկուց ծովուց մէջ, նոյն և երկուց աշխարհաց (կովկասու և Ռուսաստանի) վաճառաշահ և Ղրիմու բազմամարդ քաղաքաց մին է. իւր բնակիչքն

22,000, Սևաստոպոլեան պատերազմէն վերջը՝ տէրութիւնն մասնաւոր խնամք դարձուցել էր այս քաղաքիս վրայ, իբրեւ պատերազմական նշանաւոր կէտ մի. բերդը Ռուսաստան աշխարհի առաջնակարգ ամրութեանց մէկն է, որ զնեղուցը կը պաշտպանէ. յետին արեւելեան պատերազմին միջոց, երբ թուրք մարտիկ նաւերն ռմբակոծեցին անպատասպար ծովափնեայ քաղաքները Եւպատորիա և Թէոդոսիա, չհամարձակեցան Կերթի մօտենալու:

Հայկազունք սակաւաթիւ են քաղաքիս մէջ, այլ ունին փոքրիկ վայելչածէն եկեղեցի՝ հանդերձ փոքրիկ ուսումնարանով:

Նոյն օրը՝ կիրակի երեկոյն՝ փոքր շոգենաւով մեկնեցայ 'ի Կերթէ դէպ 'ի Պերտեանսք, ուր հարկ եղաւ ինձ մնալ մինչև ց 5 մայիսի. Նոր քաղաք է Պերտեանսք, բնակիչքը 14,000, Ազախու ծովու վրայ. ցորենի մեծ վաճառակաւնութիւն ունի. Եւրոպայիք ունին մեծամեծ վաճառաչահ տներ, և ցորեն գնելով յԵւրոպայ կ'ուղարկեն. ազգայինք սակաւաւոր են հոս, և չունին առանձին եկեղեցի. թէպէտ ծովափը ոչ բազմաթիւ, այլ վայելչածէն է հոովմէականաց եկեղեցին:

Շաբաթ օր, ամսոյն 5ին, առաւօտեան ժամը ութին մեկնելով 'ի քաղաքէս շոգենաւու վեց ժամէն հասանք Եկատերինսքաւ գաւառի, (Ղրիմեցի զաղթական Յունաց) մայր քաղաքը Մարիամպօլ, որ և Մարիամու քաղաք, 'ի պատիւ հրաշագործ պատկերի Տիրամօրն, զոր Ղրիմու Պաշտօնաւորայի վանքէն հոս փոխադրուելուն պատճառաւ՝ այդ անունը տուած են քաղաքին. բնակչաց թիւը 10,000 մեծաւ մասամբ Յոյն են, որ մի և նոյն տարին Նախիջևնու ազգայնոց հետ զաղթած են 'ի Ղրիմէ. սոքա գրեթէ ամէնքը ճրկ. նորստեան կը պարապին. փոքրիկ ծովուն ամէն անկիւններուն և խորշերուն մէջ ձգած՝ տարածած են ցան,

ցոր և ուռեկաններ. թուխու՝ ձկան դանազան տեսակները, իրենց համեղաճաշակ կիթերով, տեղացւոց ապրուստի, միանգամայն վաճառականութեան մեծ և շահաբեր նիւթ են. բաց աստի՝ կան քաղաքիս մէջ Խտալացի ցորեն ժողովող տներ, Կէս օրէն վերջը ժամը երկուսին հասանք հոս, և որովհետեւ ժամը մինչև երեկոյեան տասը պիտի մնար նաւը, բեռ տալու և բեռ առնելու համար, իջայ քաղաքը պտըտելու. Գարուխիճ ճանապարհին ուղղութեամբ դնալով՝ փոքրիկ այլ բարեձն մի եկեղեցի առաջն հանդիպեցաւ. մտայ ինքս, սոսայ որ կաթոլիկաց եկեղեցի է. շէնքին ձևը, կոկոթիւնն այնպէս կը ցուցնէր, որ եկեղեցւոյս ժողովուրդն թէպէտ քիչ, այլ ունեւոր մարդիկ են. Եկեղեցւոյն ծառայն ինձ ծանօթ մէկն էր, որոյ հրաւիրանքով մտայ քահանային տունը. ծերունի երէցն ընդունելով իմ յարգութիւնս՝ հարցուց ուսերէն թէ « Ի՞նչ ազգէ ես, որ լեզուաւ կարելի է խօսիլ հետդ »: այդ հարցմունքը ինձ տարօրէն երեցաւ, իբրեւ թէ ինքն ամենայն լեզուաց տեղեակ, ամէն ազգին հետ կարող է իւր լեզուաւ խօսիլ. փոքր մի նննգութեամբ՝ կամ լաւ ևս պատժել ուղեւով փրանկ երեցուն մեծխօսութիւնը, պատասխանեցի թէ « Հայ քահանայ եմ, Նախի. » և ջեան կ'երթամ գործով, և թէ շատ « հաճելի է ինձ հայերէն խօսիլ »: — « Խնդրում եմ, նստէք »: ասաց փրանկ երէցն. Դորա հայերէն խօսին այն աստիճանի զիս չփոթեց, որ հազիւ զարմացումս զսպելով, շնորհակալ եղայ. ծերը զուարթանալով և իւր յաղթանակին վրայ սիրտը դոհ, ձեռքը երկընջընելով՝ օդոյն մէջ կիսաբոլոր ձև մի անելով, այս հայերէն խօսքերը կ'արտաբերէր, « Եւ քալողեալ և աւետարանեալ »: զմայնեցայ, մնացի յաղթան հարեալ ծեր երեցուն դիմաց. հայերէն սկսայ շնորհակալ խօսակցութիւնը, այլ նա կրնա քացատրեց ուսերէն, որ շատ տարի առաջ Աթտերխան քահանայութիւն անելով՝ ազգայնոց հետ շատ

յարարերութիւններ ունեցել է, որով և սորվել է հայերէն, այլ ապա երկար միջոց չխօսելով՝ կորուսել է վարժութիւնը: Պատուական ծերայն մօտ քաւնի մի ժամ մնալէն վերջը՝ դարձայ՝ ի նաւ: Որ ցերեկոյեան 11 մնալով անդ, գիշերով մեկնեցաւ ի Մարիամպօլէ և առաւօտը դեռ նոր բացուած՝ հասանք յեւթ քաղաք: որ ինչպէս Պերտեանք՝ նոր քաղաք է, այլ աղբայինք ինչպէս աստ նոյնպէս և ի նորայսք ունին եկեղեցի, որոց ժողովուրդը՝ Նախիջևանցոց հատուածներ են: Այս կողմերս գրեթէ ամէն քաղաքաց մէջ կը գտնուին ազգայինք, որք ի միասին համընկելով, պէտք է լինին 10,000, բաց ի Նախիջևանէ: Նոր-Չերքեսքի, Ստաւրապօլի, Եկատերնետարի և ապա դէպ ի կասպից ծով՝ Ղզլարի մէջ կան բազմաթիւ Հայք, որ մեծագոյն մասամբ վաճառականութեան կը պարապին: Որովհետեւ Եւքրի նաւամատոյցը քաղաքէն բաւական հեռու շինուած է, և նաւը շատ չի մնար հոն, այն պատճառաւ քաղաք կարող չեղայ գնալու:

Եւքրէ մեկնելով՝ ճիշդ էն օրին հասայ Ազախու ծովուն հիւսիսային ծայրը, Թայլան կոչուած քաղաքը: Քաղաքիս անունը թաթար նշանակութեամբը՝ սահաճ կամ սպորտաճ կը թարգմանի հայերէն: և յիշուի, բարձրագիւր ցամաքն իբրեւ թումբ կամ լաւ ևս հրուանդան սահած իլած է ի ծով: Ռուք Թականրոկ կը կոչեն որ եռանկիւնի-եղիշիւր կը նշանակէ: Չկայ ազգային եկեղեցի աստ: այլ բաւական հայկա՝ գունք կան ի քաղաքիս, զորս կը հռվուեն Նախիջևանու երիցունք, զի երկաթուղով երկու ժամուան ճանապարհ է աստի ի Նախիջևան:

Թայլանի բնակչաց թիւը 30,000, այլ ինքն առաւել մեծ և փառաւոր քաղաքի երեւոյթ ունի. փողոցները լայն և ընդարձակ, երկու կողմը մեծամեծ շէնքերով և ծառատաւան ճեմելեօք զարդարուած: սակայն սորա անցեալն աւելի չքեղ է քան ներկայն: մերձաւոր դրացին Դոնեան Ռոստով յափշտակած

է նորա վաճառականութիւնը, նա օր ըստ օրէ կ'աճի և սա երթալով կը մեղմանայ, ի պատմութեան նշանաւոր է Թայլան այնու՝ զի հոն վախճանած է յաղթողն Ա. Նափոլէոնի՝ Աղբքսանդր Ա. կայսր Ռուսաց 1825ին: Արքային պալատն, որում ի դարձիս այցելութեան ելայ, անշուք է և կարասին շատ հասարակ. ասկէ 50 տարի առաջ, այն անշուք կարասեօք բաւականացել է աշխարհիս մեծագոր իշխողներէն մին, մինչդեռ այժմ մեր գաղթական Նախիջևանցի տանուտերանց բնակութիւնն և կարասիքն շատ աւելի վայելուչ են և ճոխ: Գեղեցիկ է կայսեր պղնձաճոյլ արձանն, որ բարձր պատուանդանի վրայ կանգնած է քաղաքին մեծ հրապարակին վրայ: մեծ և ընդարձակ է քաղաքին զբօսական պարտէզը:

Գ

Ա. Չ. Ա. Ի. Ռ. Ի. Ծ. Ո. Վ.

Ընդհատեալ ճանապարհորդութեամբ 20 ժամ ճանապարհորդելէն վերջ, ընդերկայնութիւն ծովուս ի հարաւայ դէպ ի հիւսիս, կ'արժէ քանի մի տողեր նուիրել այս ծովուս. ես այնպէս կարծեմ՝ որ այս ծովակս իւր աշխարհագրական գրիւքն և ձեով, հետաքրքրական է՝ եթէ ոչ ամենուն, այլ գոնէ աշխարհագրութիւն ուսանող համբաւաց: Ինքը փոքր, այլ ծով անունը կը կրէ հաւասար մեծամեծ ծովերու: գիրքը՝ Եւրոպայի մի անկիւնը, ազուաւ ի թեի նման կպած է Սև ծովուն, զոր աւելի լին կարելի է զրուցել քան թէ ծով: երկու մեծամեծ գետեր կը թափեն սորա մէջ հեռաւոր աշխարհներէ բերած ջրերը, Դոն հիւսիսային կողմէն և Քուպան հարաւէն: Երկայնութիւն ծովակիս 340 հազարսմետր և լայնութիւն 240: յատկաւ խոր չէ, այն պատճառաւ միայն փոքր նաւեր կարնան վերան չրջել տափակ յատակներով: շատ տեղ երկու կողմէն ցամաքը կ'երևայ: հանդերձ այնու, մեծ և անտանկի կը

լինի ալէկոծութիւնը, և լի վտանգօք, շատ անգամ 5 և 6 ժամուան ճանապարհը, օրերով չեն կարող կտրել անցնիլ, անհնարին կը լինի ծովային հիւանդութենէ բռնուողներուն վիճակը. զի անհանգաւոր կոհակները ոչ մի բոպէ հանգիստ չեն շնորհեր հիւանդաց, լատինացիք *Palus Mæotis* կոչել են զնա, արեւելեան կողման եղէգնուտներուն պատճառաւ: Ծովակին չորը պղտոր է և գեղնազոյն, աւելի գետի ջուրի յատկութիւն ունի քան ծովու, մանաւանդ գետաբերանաց մօտ տեղումք. կը խմեն և կը գործածեն բոյսեր ջրերու:

Դենուացիք ձի դարուն տիրած են ծովուս և չրկակայ աշխարհին, և իրենց հետքը ցարդ թողուցել են գեղեցկաշէն աշտարակներով: Ծովակին համանուն (Աղով) փոքրիկ քաղաքին մէջ նահատակուած է յայլազգեաց հայկազն Սահակ պատանին, որոյ վկայաբանութիւնը նօտրագիր գրուած գտայնախիջևնու ձեռագիր Յայամաւուրաց մէկուն ետեւը, որ կը պահուի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն պահարանին մէջ:

Թայդանէ կարելի էր փոքր շոգենաւով Դոն գետին վրայէն գնալ 'ի Ռոստով. այլ որովհետեւ կէս օրէն վերջը, անմիջապէս ժամը երեքին երկամիտուղոյ ընթացք մի պիտի մեկնէր 'ի Թայդանէ Ռոստով, ընտրեցի ցամաքի ճանապարհը, Ժամագրեալ ատենին մեկնեցաւ ընթացքը: Պայծառ և գեղեցիկ օր մի էր, երթալով կը մօտենային ապատակիս, երկու ժամէն պիտի լինէի հայանուն քաղաքին մէջ, և պիտի տեսնէի, երբեմն մեզ նման Անցի և ապա Տաւրիացի, իսկ այժմ Նախիջևնցի համազգի և համշիրակ եղբարքը:

Թէպէտ և երկար չէր ճանապարհը, սակայն և այնպէս կառքին պատուհանէն դէպ 'ի չրկակայից վրայ նայելով, կ'ուզէի գաղափար ստանալ, այդ եկա-

Շարունակելի

տերինեալաւ գաւառին քաջաբերութեան և այլ հանգամանաց վրայ, եր տեսնէի յալմէ Դոն գետն՝ հեղած գետ, անկանոն ընթացքով, տեղ տեղ ջրերը մինչև հորիզոնին կը հասնէին. որոց մէջէն տխրատեսիլ կորացեալ ուռիք, արմատներն և ճիւղերուն կէսը ջրոց մէջ, իսկ միւս կէսն՝ օդոյն մէջ երերազին, լալական և տրամալի տեսիլ մի կ'ընծայէին. ուռենեացս նման աւաղելի դրից մէջ էին ցիր ու ցան ձկնորսաց հիւղերը. անկարգ և անկա, նոն ձևով կը տեսնէի հեռուն՝ Դոնեան թազախաց գիւղերը: Ի ձախմէ դաշտ էր և անապատ, մշակութիւնը սակաւ. անտառ կամ պարտեզ քիչ անգամ կը հանդիպէին աչացս: Ինչ զգալի հակապատկեր անցեալ տարւան ճանապարհորդութեան և այս տարուանին մէջ. հոն փոստոյեան և ֆիւի գաւառները և առ հասարակ Ուքրա, յիս, թէպէտ և աշնանային տարազի մէջ, այլ ամենուրեք կեանք և մշակութիւն կը տեսնէի. դաշտը առհասարակ արօրագիր՝ մշակուած, ամէն կողմ պտղատու պարտեզներ, կանոնաւորեալ անտառներ, մինչդեռ հոս ամայի և խոպան, Սակայն հոս ելք ճանապարհին՝ հայ ուղևորի համար լի մխիթարութեամբ. մինչդեռ հոն կոտրի և լքանի հայ սիրտը, ազգութեանս իսպառ կործանումը տեսնելով: Հոս հայաւ չէն և հայախօս հազարաւոր ժողովրդ, դով քաղաք մի կ'եննայ ընդ առաջ ճանապարհորդին, հինգ մեծամեծ հայաքնակ գիւղերով. խօսքս Նոր-Նախիջևնու համար է: — Այլ մեք դադրեցրնելով առ ժամ մեր ուղևորութեան պատմութիւնը, քննենք թէ ինչ պատճառաւ Հայք թողլով զՂրիմ, եկած են այս տեղ, ինչպէս եկած են, և ո՞րք եղած են նոցա առաջնորդք:

Հ. ԲԵՐՈՂԱՅ Վ. ՔՈՒՆԵՐՈՒՄԱՆ